

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 փետրվարի 2015 թ.

N 67-Ն

Ֆ. Ստեփանակերտ

**ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ, ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ
ՀԱՏՈՒԿ ԵՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԹՆՔԱՅԻՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ
ՀՈՂԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ս ք ս Ե ու մ է.**

1. Սահմանել որսորդական կարիքներին, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման նպատակով պաշտպանական, արտադրական և հատուկ նշանակության պետական և համայնքային անտառներում անտառային հողերից օգտվելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ՈՐՄՈՐԴԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ, ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՊԱՏԱԿՈՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ
ՀԱՏՈՒԿ ԵՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԹՆՔԱԹԻՆ
ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԱՆՏԱՌԱԹԻՆ ՀՈՂԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է որսորդական կարիքների, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման նպատակով պաշտպանական, արտադրական և հատուկ նշանակության պետական և համայնքային անտառներում անտառային հողերից (այսուհետ՝ անտառային հողեր) օգտվելու կարգը:

2. Որսորդական կարիքների, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման նպատակով անտառային հողերից անտառօգտագործումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքին, «Կենդանական աշխարհի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

3. Որսորդական կարիքների, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման նպատակով անտառային հողերը վարձակալության իրավունքով օգտագործման են տրամադրվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և օտարերկրյա ֆաղաֆացիներին, իրավաբանական անձանց, ինչպես նաև անհատույց օգտագործման իրավունքով՝ հասարակական կազմակերպություններին մինչև 60 տարի ժամկետով:

4. Անտառային հողերն օգտագործման են տրամադրվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի N 519-Ն որոշմամբ սահմանված կարգով:

5. Անտառային հողերի օգտագործումը որսորդական կարիքների, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման նպատակով իրականացվում է՝ հաշվի առնելով անտառների բնական վերանորոգման, սանիտարական վիճակի և հրդեհային անվտանգության կանոնների պահպանումը:

6. Որսորդական կարիքների, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման նպատակով օգտագործման տրամադրված անտառային հողերում անտառտնտեսական միջոցառումները, ինչպես

նաև առանց անտառային հողերի նկատմամբ իրավունքի ձեռքբերման մեկ այլ օգտագործողի կողմից այլ տեսակի անտառօգտագործում կարող է իրականացվել, եթե դա չի խանգարում անտառային հողերի օգտագործման պայմանագրով նախատեսված անտառօգտագործմանը:

7. Որսորդական կարիքների, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման նպատակով անտառային հողերում կենդանիների գլխաքանակը, ազատ կամ կիսաազատ պայմաններում բազմացման դեպքում, կարգավորվում է սվյալ անտառային համակեցությանը բնորոշ թույլատրելի առավելագույն խտության համաձայն:

8. Անտառային հողերում որսորդական տնտեսության վարման, կենդանիների բազմացման, գլխաքանակի կարգավորման և օգտագործման հետ կապված միջոցառումներն իրականացվում են անտառօգտագործողի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացված և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրական եզրակացություն ստացած ծրագրի (նախագծի) համաձայն:

9. Անտառային հողերի օգտագործման պայմանագրում չնշված կենդանական տեսակների օգտագործումը տարվա ցանկացած ժամանակահատվածում, ինչպես նաև անտառային հողերի օգտագործման պայմանագրում նշված կենդանիների օգտագործումը նախատեսված ժամանակահատվածից դուրս իրականացվում է լիազոր մարմնի կողմից տրված թույլտվության հիման վրա տրամադրված անտառային տոմսի համաձայն:

10. Որսորդական կարիքների, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման նպատակով օգտագործման տրամադրված անտառային հողերում յուրաքանչյուր կենդանու օգտագործումն իրականացվում է առանձին տրամադրված անտառային տոմսի համաձայն:

II. ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Որսորդական կարիքների, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման նպատակով օգտագործման տրամադրված անտառային հողերում անտառօգտագործողներն իրավունք ունեն՝

1) մեկ այլ անտառօգտագործողների կողմից իրականացվող գործունեության հետևանքով կենդանիների գոյատևմանը խանգարելու, ձվադրման և բնադրման տեղերը վատթարացնելու դեպքում, պահանջել անտառտնտեսություն վարող կազմակերպությունից ձեռնարկել համապատասխան միջոցներ բացասական ազդեցության վերացման ուղղությամբ.

2) անտառտնտեսություն վարող կազմակերպությունից ստանալ տեղեկություններ սվյալ տարածքում իրականացվելիք հատումների, անտառվերականգնման, անտառպաշտպանական և հակահրդեհային

միջոցառումների իրականացման, ինչպես նաև անտառօգտագործման այլ տեսակների թույլտվությունների ծավալների և ժամկետների վերաբերյալ.

3) օգտվել անտառնտեսությանը պատկանող օգտագործման տրամադրված անտառային հողերի անտառաշինական նախագծի որսորդական կարիքների, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման համար անհրաժեշտ համապատասխան փաստաթղթերից:

12. Որսորդական կարիքների, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման նպատակով օգտագործման տրամադրված անտառային հողերում անտառօգտագործողները պարտավոր են.

1) իրականացնել օգտագործման տրամադրված և դրան հարակից 50 մետր լայնությամբ ամբողջ տարածքի անտառային հողերի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև գեոդեզիական և սահմանային նշանակության սյուների պահպանությունը.

2) յուրաքանչյուր տարի ժամանակակից մեթոդներով իրականացնել կենդանիների հաշվառում և տեղեկությունները տրամադրել անտառնտեսություն վարող կազմակերպությանը:

III. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13. Որսորդական կարիքների, կենդանական աշխարհի օգտագործման և վերարտադրության կազմակերպման նպատակով օգտագործման տրամադրված անտառային հողերում անտառախախտման համար անտառօգտագործողը կրում է պատասխանատվություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, անտառօգտագործման հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ